ՌՈՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0002-4171-1234

ՀՀ, ԵԱՏՄ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչության կենսամակարդակի գնահատումը ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր գործիքներից մեկն է, որի համար կիրառելի են մեծ թվով ցուցանիշներ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ որակական և քանակական: Այս առումով շատ կարևոր է առավել բնութագրական, վստահելի, կյանքի սոցիալական ու տնտեսական էական ցուցանիշներ ընդգրկող և գործնականում կիրառելի (հաշվարկման պարզություն, տվյալների հասանելիություն և վստահելիություն, տարբեր երկրների կամ տարածաշրջանների բնակչության միջև համեմատական վերլուծություններ կատարելու հնարավորություն) մեթոդների ստեղծումն ու զարգացումը: Այս համատեքստում ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրն առաջարկում է բնակչության կենսամակարդակի գնահատման տարբեր մոտեցումներ, որոնք, ժամանակի ընթացքում զարգանալով և ներառելով մարդկանց կյանքի սոցիալական և տնտեսական կարևոր տեսանկյուններ, լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում ինչպես պետական մակարդակում (ազգային վիճակագրություն, սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակում և այլն), այնպես էլ բազմաթիվ գիտնականների և հետազոտողների կողմից՝ թեմայի շրջանակներում ուսումնասիրություններ կատարելու համար:

Աշխատանքի նպատակը ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների զարգացման, անհավասարության և կենսամակարդակի ցուցանիշների համեմատական վերլուծությունն ու գնահատումն է, որի համար որպես գործիքակազմ է ընտրվել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից առաջարկվող ինդեքսների խումբը:

Վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ ՄԶԻ (մարդկային զարգացման ինդեքս) աճը, ի տարբերություն ուսումնասիրվող մյուս երկրների, պայմանավորված է հիմնականում եկամուտների աճով: Հայաստանում, Ռուսաստանում և Ադրբեջանում եկամուտների աճն ուղեկցվում է անհավասարության խորացմամբ: Հայաստանում փողամարդկանց ՄԶԻ արժեքն ավելի բարձր է, ինչը հիմնականում պայմանավորված է եկամուտների՝ գրեթե կրկնակի գերազանցմամբ:

Հիմնաբառեր. *կենսամակարդակ, անհավասարություն, առողջություն, կրթություն, եկամուտ, ՄԶԻ*

JEL: I00, N30
DOI: 10.52174/1829-0280_2022.3-131

Ներածություն: Ցանկացած երկրի բնակչության կենսամակարդակը բնութագրելու համար կիրառելի են մեծ թվով ցուցանիշներ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ որակական և քանակական: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ)[1], Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ)[2] և այլ հեղինակավոր միջազգային կազմակերպություններ ակտիվորեն զբաղվում են բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի գնահատման առավել բնութագրական, վստահելի, կյանքի սոցիալական ու տնտեսական էական ցուցանիշներ ընդգրկող և գործնականում կիրառելի (հաշվարկման պարզություն, տվյալների հասանելիություն և վստահելիություն, տարբեր երկրների կամ տարածաշրջանների բնակչության միջև համեմատական վերլուծություններ կատարելու հնարավորություն) մեթոդների ստեղծմամբ և զարգացմամբ: Բնակչության կենսամակարդակի գնահատումը ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր գործիքներից մեկն է:

Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի տնտեսական զարգացման և կենսամակարդակի բարձրացման համար շատ կարևոր են արտաքին հարաբերությունները, մասնավորապես՝ առևտրատնտեսական կապերի ազատականացումը տարածաշրջանի երկրների հետ: Այս համատեքստում մեծ է ԵԱՏՄ դերը, որին Հայաստանն անդամակցում է 2015-ից: ԵԱՏՄ-ն միջազգային ինտեգրման տնտեսական միավորում է, որը ստեղծվել է անդամ երկրների ազգային տնտեսությունների արդիականացման, համագործակցության և բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով: Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեն նաև հարևան պետությունների հետ արտաքին կապերի ստեղծումն ու զարգացումը:

Քանի որ վերջին տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման լոկոմոտիվը ԵԱՏՄ համագործակցությունն է, ուստի կարևոր է հասկանալ անդամ երկրների շարքում Հայաստանի դիրքը բնակչության կենսամակարդակի, զարգացման և անհավասարության հարթություններում:

Գրականության ակնարկ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, 2011 թ. սկսած, որոշակի պարբերականությամբ աշխարհին է ներկայացնում «Ինչպե՞ս է կյանքը. բարեկեցության գնահատում» («How's Life?: Measuring Well-Being») վերտառությամբ ծավալուն հե-

[1] Տե՛ս https://www.oecd.org/
[2] Տե՛ս https://www.un.org/en/

տազոտությունները: Բնակչության կենսամակարդակը գնահատելու համար ՏՀԶԿ-ն հետազոտության հիմքում դնում է երեք հիմնասյուներ՝ բնակչության նյութական կենսապայմանները, կյանքի որակը և կայունությունը[3]: Այստեղ շեշտը դրվում է տնային տնտեսությունների և անհատների վրա, որովհետև համախառն տնտեսական ցուցանիշները կարող են ճիշտ չարտացոլել այդ երկրի առանձին ՏՏ-ների կամ անհատների բարեկեցությունը: Բնակչության տարբեր խավերի միջև անհավասարության բարձր մակարդակը թույլ չի տալիս ճիշտ գնահատել այդ երկրի բնակչության կենսամակարդակը միջինացված ցուցանիշներով:

ՏՀԶԿ-ն իր հետազոտություններն իրականացնելու համար վերլուծում է բնակչության կենսամակարդակը գնահատող հետևյալ 11 չափանիշները.

1. եկամուտներ և հարստություն,
2. բնակարանային պայմաններ,
3. աշխատանքային պայմաններ և զբաղվածություն,
4. առողջություն,
5. գիտելիքներ և հմտություններ,
6. բնապահպանության որակ,
7. սուբյեկտիվ բարեկեցություն,
8. անձնական անվտանգություն,
9. աշխատանք–կյանք հարաբերակցություն,
10. սոցիալական հարաբերություններ,
11. քաղաքացիական ներգրավվածություն:

Միջազգային ստանդարտների վրա հիմնված այս չափանիշները, որոնք ընտրվել են ՏՀԶԿ փորձագետների և նրա անդամ երկրների ազգային վիճակագրական գրասենյակների հետ խորհրդակցությունների արդյունքում, ապագայում, անշուշտ, կփոփոխվեն, քանի որ դրանք ունեն էվոլյուցիոն բնույթ, և ժամանակի ընթացքում մշակվում են ավելի նորարարական միջոցներ[4]:

20-րդ դարի վերջին ամբողջ աշխարհում նկատվում էին խիստ անհանգստացնող երևույթներ. որոշ պետությունների բնակչության կյանքը վատթարանում էր, մինչդեռ տնտեսական արտադրությունն այդ երկրներում ընդլայնվում էր, իսկ այլ պետություններում բնակչությունը ձեռք էր բերում բարեկեցության բավարար մակարդակ՝ անգամ շատ համեստ եկամուտներ ունենալով: Հարուստ հասարակություններում ՄԻԱՎ/ՁԻԱՀ տարածման, հանցագործությունների և աղտոտվածության աճող մակարդակների, ինչպես նաև թուլացող սոցիալական կառուցվածքի պատճառով տնտեսական աճի բարձր տեմպերը չէին հանգեցնում մարդկանց բարեկեցության աճի, ուստի նոր հարցեր էին ի հայտ գալիս տնտեսական աճի որակի, բնույթի և բաշխման վերաբերյալ: Մտահոգված լինելով այս խնդիրներով՝ Մահբուբ ուլ Հաքը 1989 թ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի[5] ղեկավար Ուիլյամ Դրեյփեր 3-րդին ներկայացրեց մարդկային զարգացման տարեկան զեկույց պատրաստելու գաղափարը, որն էլ վերջինս պատրաստակամորեն ընդունեց: Այսպիսով՝

---

[3] Տե՛ս OECD, How's Life?: Measuring Well-being, OECD Publishing. Paris, 2011, https://doi.org/10.1787/9789264121164-en

[4] Տե՛ս OECD, How's Life? 2020: Measuring Well-being, OECD Publishing, Paris 2020, https://doi.org/10.1787/9870c393-en

[5] Տե՛ս https://www.undp.org/

1990 թ. Oxford University Press-ը հրապարակեց մարդկային զարգացման առաջին զեկույցը, որի հիմքում այն գաղափարն էր, որ զարգացման իրական նպատակը մարդկանց հնարավորությունների ընդլայնումն է: Դրան հասնելու համար եկամուտը շատ կարևոր է, բայց միակ չափանիշը չէ. նույնչափ կարևոր են նաև առողջությունը, կրթությունը, ազատությունը և շրջակա միջավայրը: Զեկույցում ուսումնասիրվել է տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև կապը, արդյունքում՝ կատարվել են որոշ կարևոր եզրակացություններ, որոնք շրջադարձային էին և զգալի ազդեցություն ունեցան հաջորդ տասնամյակների զարգացման ռազմավարությունների վրա[6]:

Մինչ օրս Մարդկային զարգացման զեկույցը մնում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) առանցքային գործիքը մարդկային գլոբալ զարգացման մակարդակը և դրան նպաստող քաղաքականությունների արդյունքները աշխարհին ներկայացնելու համար: Այդ իսկ պատճառով էլ 1990 թ. ի վեր պատրաստվել են ավելի քան 800 համաշխարհային, տարածաշրջանային, ազգային և ենթազգային զեկույցներ[7]:

Մարդկային զարգացման զեկույցների առանցքային նորարարությունները չափման նոր գործիքներ են, որոնցից հատկապես առանձնանում է մարդկային զարգացման ինդեքսը (HDI), որը գործարկվել է դեռևս առաջին զեկույցում: Այս ինդեքսի առանձնահատկությունն այն է, որ զարգացումը չափում է ոչ միայն մեկ շնչին բաժին ընկնող եկամտով, այլև հաշվի է առնում ձեռքբերումները առողջապահության և կրթության ոլորտներում[8]:

Սակայն որոշ հեղինակներ համաձայն չեն, որ 20-րդ դարի վերջերին մեկ շնչի հաշվով ազգային եկամուտը սոցիալական բարեկեցության միակ չափանիշն էր: Նրանք պնդում են, որ եկամուտը, իրականում, ինչպես տնտեսագետների, այնպես էլ սոցիալական քաղաքականություն մշակողների համար երբեք անգամ առաջնահերթ ցուցանիշ չի համարվել[9]: Որոշ հեղինակներ մարդկային զարգացման ինդեքսը անվանում են «հին գինի՝ նոր շշի մեջ»՝ պնդելով, որ մինչև 1960-ականները, երբ զարգացումը կապվեց տնտեսական աճի հետ, բնակչության բարեկեցության ներկայացման ավելի համապարփակ տեսակետներ կային[10]:

Մարդկային զարգացման ինդեքսը մարմնավորում է մարդու բարեկեցությունը ընկալելու՝ Ամարտյա Սենի «կարողությունների» մոտեցումը, որն ընդգծում է նպատակների կարևորությունը (օրինակ՝ արժանապատիվ կենսամակարդակը) միջոցների նկատմամբ (օրինակ՝ մեկ շնչի հաշվով եկամուտը)[11]:

Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակակիր Ամարտյա Սենը նշում է, որ կյանքի որակը հասկանալու սկզբունքորեն տարբեր բազմաթիվ եղանակներ կան, որոնցից շատերն են ճշմարտանման: Ըստ Ա. Սե-

---

[6] Տե՛ս **Mahbub ul Haq,** Reflections on Human Development, Oxford University Press. New York, 1995:

[7] Տե՛ս UNDP, 2018 Statistical Update: Human Development indices and Indicators. New York, 2018, https://hdr.undp.org/en/content/human-development-indices-indicators-2018-statistical-update

[8] Տե՛ս HDR Technical Notes 2020, https://hdr.undp.org/en/content/hdr-technical-notes

[9] Տե՛ս **Srinivasan T.,** Human Development: A New Paradigm or Reinvention of the Wheel?, American Economic Review, vol. 84, issue 2, 1994, էջ 238-243:

[10] Տե՛ս **Rao V.V. Bhanoji,** Human Development Report 1990: Review and Assessment, World Development, vol. 19, No 10, GB 1991, էջ 1451-1460:

[11] Տե՛ս **Stanton E.A.,** The human development index: A history, PERI Working Papers, 2007:

նի՝ անհատը, լինելով ապահովված, կարող է լինել անառողջ: Նա կարող է լինել առողջ, սակայն հնարավորություն չունենա վարելու այն կյանքը, որը կցանկանար, կարող է ապրել իր երազած կյանքով, բայց երջանիկ չլինել, կարող է լինել երջանիկ՝ չունենալով բավարար ազատություն, կարող է ունենալ բավարար ազատություն, բայց չհասնել հաջողությունների, և այսպես շարունակ[12]:

ԵԱՏՄ անդամ երկրների կենսամակարդակի և զարգացման վերաբերյալ կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ այս երկրներում զարգացման տեմպերն էապես տարբերվում են, սակայն այդ նպատակին հասնելու համար որդեգրած քաղաքականությունը, մեթոդներն ու զարգացման գործիքները համանման են[13]: ԵԱՏՄ-ն, հաշվի առնելով անդամ երկրների տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական առանձնահատկությունները, պետք է ձևավորի ուրույն սոցիալական մոդել, որպեսզի աճող աշխարհաքաղաքական ռիսկերի պայմաններում կարողանա դիմագրավել գլոբալ մրցակցության ճնշումներին[14]: Աշխատուժի մասնակցության մակարդակը կարևոր խթան է տնտեսական աճի համար, և այս համատեքստում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում, Ռուսաստանում և Բելառուսում ցուցանիշն ունի նվազման միտում, ուստի այս գործոնով պայմանավորված կորուստները կարելի է փոխհատուցել՝ օգտագործելով կենսաթոշակային տարիքի բնակչության, ինչպես նաև միգրանտների աշխատուժը[15]:

Հետազոտության մեթոդաբանություն: Ցանկացած երկրի բնակչության կենսամակարդակը գնահատելու կամ տարբեր երկրների բնակչության միջև համեմատական վերլուծություններ կատարելու համար հիմնականում դիտարկվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, սպառողական գների ինդեքսը, գործազրկության և զբաղվածության մակարդակները: Սակայն բնակչության կենսամակարդակը շատ ավելի լայն հասկացություն է, և դա առավել հանգամանորեն ուսումնասիրելու համար պետք է կարևորել ոչ միայն վերը նշված ցուցանիշները, այլև այնպիսիք, որոնք նկարագրում են մարդկային զարգացումը և անհավասարությունը: Իհարկե, մեկ շնչի հաշվով եկամուտը չափազանց կարևոր դեր ունի կենսամակարդակի և բարեկեցության բարձրացման հարցում, սակայն ժամանակակից աշխարհում կարևորությամբ հետ չեն մնում նաև կրթության և առողջապահության մակարդակները: Այս համատեքստում հատկանշական են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից առաջարկվող ինդեքսները, որոնք, ժամանակի ընթացքում զարգացվելով և ներառելով մարդկանց կյանքի սոցիալական ու տնտեսական կարևոր տեսանկյուններ, լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում ինչպես պետական մակարդակում (ազգային վիճակա-

---

[12] Տե՛ս **Sen A.,** The Standard of Living, Cambridge University Press, UK 1987:

[13] Տե՛ս **Журавлева Г.П., Манохина Н.В., Самохина Е.А.,** Международная рейтинговая оценка развития стран-членов ЕАЭС, Вестник Челябинского государственного университета, 10(406), 2017, էջ 46-53:

[14] Տե՛ս **Толысбаев Б.С., Утеубаев Т.Б., Курманов Н.А.,** Человеческий потенциал Казахстана и в странах ЕАЭС, Хабаршысы, 2(82), 2016, էջ 91-97:

[15] Տե՛ս **Господарик Е.Г., Иришев Б., Ковалев М.М.**, Гибридная производственная модель прогнозирования экономического роста ЕАЭС, «Новая экономика», 1(65), 2015, 15 20-29:

գրություն, սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակում և այլն), այնպես էլ բազմաթիվ գիտնականների և հետազոտողների կողմից՝ թեմայի շրջանակներում ուսումնասիրություններ կատարելու համար: Այսպիսով՝ հոդվածում առաջադրված խնդիրը լուծելու համար կկատարվի համեմատական վերլուծություն ըստ վերը նկարագրված ինդեքսների խմբի, ինչպես նաև դրանց բաղկացուցիչ ցուցանիշների: Ստորև ամփոփ ներկայացված են ուսումնասիրվող ինդեքսները:

Մարդկային զարգացման ինդեքսը ամփոփ ցուցանիշ է, որը ներառում է մարդկային զարգացման երեք հիմնասյուն՝ երկար և առողջ կյանք, գիտելիքների հասանելիություն և արժանապատիվ կենսամակարդակ: Երկրները, ըստ մարդկային զարգացման ինդեքսի, դասակարգվում են 4 խմբում. եթե HDI արժեքը 0.550-ից ցածր է, ապա տվյալ երկիրը համարվում է ցածր, 0.550–0.699 միջակայքի դեպքում՝ միջին, 0.700–0.799 միջակայքի պարագայում՝ բարձր, իսկ 0.800 և ավելիի դեպքում՝ շատ բարձր զարգացվածություն ունեցող[8]:

Աշխարհի շատ երկրներում շարունակաբար աճում է անհավասարության մակարդակը, որի հիմնական պատճառը եկամուտների բևեռացման խորացումն է, սակայն անհավասարության աճի են հանգեցնում նաև կրթության, առողջության, ձայնի և անհատի համար այլ հիմնական կարիքների հասանելիության տարբերությունները: Ակնհայտ է, որ տնտեսական աճի արդյունքում աճում է միջին եկամուտը, սակայն հարկ է գնահատել, թե ինչպես է բաշխվում այդ աճը: Այլ կերպ ասած՝ պետք է պարզել, թե միջինի աճը առավելապես որ եկամտային խմբերի աճի հաշվին է տեղի ունենում: Մարդկային զարգացման ինդեքսը հաշվարկվում է միջինացված ցուցանիշներով՝ հաշվի չառնելով երկրի ներսում տիրող անհավասարությունը:

2010 թ. ի վեր Մարդկային զարգացման զեկույցը ներկայացնում է անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսը (IHDI)՝ փորձելով բացահայտել մարդկային զարգացման բաշխվածությունը երկրների ներսում: IHDI-ն, հաշվի առնելով բնակչության միջև անհավասարության մակարդակը, ճշգրտում է HDI արժեքը: Եթե որևէ երկրում լինի կատարյալ հավասարություն, ապա HDI և IHDI արժեքները հավասար կլինեն, այլապես անհավասարությամբ ճշգրտված ինդեքսը կզիջի ընդհանուրին: Որքան բարձր է երկրում անհավասարության մակարդակը, այնքան HDI-IHDI տարբերությունն ավելի մեծ է[7]:

Գենդերային անհավասարությունը, որն ավելի մեծ է քիչ զարգացած երկրներում, շարունակում է մնալ մարդկային զարգացման ամենամեծ խոչընդոտներից մեկը: Ըստ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մասնագետների՝ առաջընթացի ներկայիս տեմպերով գենդերային անհավասարությունը ամբողջ աշխարհում վերացնելու համար կարող է պահանջվել ավելի քան 200 տարի: 2010 թ. ի վեր Մարդկային զարգացման զեկույցը ներկայացնում է գենդերային անհավասարության ինդեքսը (GII), որը կարևորում է հասարակության մեջ կանանց հզորացումը: Դա արտացոլում է կանանց վերարտադրողական առողջության, կրթության, աշխատաշուկայում և քաղաքական ներկայացվածության անհավասարությունները: Որքան բարձր է GII արժեքը, այնքան մեծ է գենդերային անհավասարությունը, որն առկա է բոլոր երկրներում[7]: Գենդերային անհավասարության ինդեքսը ցույց է տալիս նշված ան-

հավասարությունների պատճառով տեղի ունեցած մարդկային զարգացման կորուստը: Ինդեքսը տատանվում է 0-ից 1 միջակայքում, որտեղ 0-ն նշանակում է կատարյալ հավասարություն, իսկ 1-ը՝ կատարյալ անհավասարություն (երբ հաշվարկվող բոլոր ինդեքսները բևեռացված են նույն ուղղությամբ)[8]:

Արդեն 2014 թ. Մարդկային զարգացման զեկույցը ներկայացրեց գենդերային զարգացման ինդեքսը (GDI), որը, համեմատելով երկու գենդերային խմբերի HDI արժեքները, արտացոլում է կանանց և տղամարդկանց ձեռքբերումները մարդկային զարգացման հիմնական հարթություններում[7]:

Աղյուսակ 1

Երկրների դասակարգման կարգն ըստ գենդերային զարգացման ինդեքսի

Խումբը	1	2	3	4	5
Բացարձակ շեղումը	2.5% կամ պակաս	2.5–5%	5–7.5%	7.5–10%	10% և ավելի

Աղբյուրը՝ HDR Technical Notes 2020, https://hdr.undp.org/en/content/hdr-technical-notes:

Երկրները, ըստ գենդերային զարգացման ինդեքսի, դասակարգվում են 5 խմբում, ինչի համար հաշվի է առնվում GDI-ի՝ գենդերային հավասարությունից բացարձակ շեղման չափը՝ $100 \cdot |GDI - 1|$: Խմբավորումը կատարվում է աղյուսակ 1-ում ներկայացված սկզբունքով:

Վերլուծություն: Համաձայն Մարդկային զարգացման 2020 թ. զեկույցի[16]՝ Հայաստանի Հանրապետությունը 189 երկրների շարքում գրավում է 81-րդ հորիզոնականը: Համեմատության համար նշենք, որ հարևան երկրների շրջանում ամենաբարձր հորիզոնականում Թուրքիայի Հանրապետությունն է (54), իսկ հետնապահը Ադրբեջանի Հանրապետությունն է (88): ԵԱՏՄ երկրների շարքում Հայաստանի դիրքն այնքան էլ բարձր չէ. զիջում է միայն Ղրղզական Հանրապետությունը (120): 1990–2019 թթ. մարդկային զարգացման ինդեքսը Հայաստանում աճել է 18.7%-ով՝ 2019 թ. կազմելով 0.776 միավոր: Բավականին մեծ աճ են գրանցել Թուրքիայի և Իրանի Իսլամական Հանրապետությունները, համապատասխանաբար՝ 40.7 և 38.6 տոկոս: Հայաստանը 0.766 միավորով դասվում է բարձր զարգացվածություն ունեցող երկրների շարքին և այդ խմբում ունի միջինից բարձր գնահատական (այս խմբում 2019 թ. միջինը կազմել է 0.753 միավոր), սակայն դեռևս հետ է մնում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշից (0.791): ԵԱՏՄ երկրներից Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը դասակարգվում են շատ բարձր, իսկ Ղրղզստանը միջին զարգացվածություն ունեցող պետությունների շարքում է, թեև շատ մոտ է բարձր զարգացվածություն ունեցող երկիր համարվելուն: Հայաստանի հարևան երկրներից Իրանն ու Ադրբեջանը դասակարգվում են բարձր, իսկ Թուրքիան և Վրաստանը շատ բարձր զարգացվածություն ունեցող երկրների շարքում են:

[16]Տե՛ս UNDP, HDR 2020, The next frontier: Human development and the Anthropocene, 2020:



Գծապատկեր 1. ***Մարդկային զարգացման ինդեքսի դինամիկան (1990-2019)***
Աղբյուրը՝ UNDP HDR Data Center[17]:

Հայաստանում կյանքի սպասվող տևողությունը 2019 թ. կազմել է 75.1 տարի, ինչը ամենաբարձր ցուցանիշն է ԵԱՏՄ երկրների շարքում: 1990–2019 թթ. ընթացքում այս ցուցանիշը Հայաստանում աճել է 7.2 տարով, իսկ ուսումնասիրվող երկրների շարքում ամենամեծ աճը գրանցել են Թուրքիան և Իրանը, համապատասխանաբար՝ 13.4 և 12.9 տարի: Կրթության սպասվող տևողությունը 2019 թ. Հայաստանում կազմել է 13.1, իսկ միջին տևողությունը՝ 11.3 տարի (աճը համապատասխանաբար 2.3 և 1.2 տարի): Թուրքիայում կրթության սպասվող տևողությունը բավականին բարձր է (16.6 տարի), սակայն շատ ցածր է կրթության միջին տևողությունը (8.1 տարի): Իրանը բավականին լավ աճ է գրանցել այս երկու ցուցանիշների առումով, իսկ Ադրբեջանում կրթության միջին տևողությունը վերջին 25 տարիների ընթացքում գրեթե չի փոփոխվել: Ինչ վերաբերում է մեկ շնչին բաժին ընկնող համախառն ազգային եկամտին (ՀԱԵ), ապա Հայաստանում 2019 թ. կազմել է 13 894 դոլար՝ գրեթե 2 անգամ զիջելով Ռուսաստանին և Թուրքիային: Այս ցուցանիշի առումով Հայաստանը վերջին երեք տասնամյակների ընթացքում գրանցել է 167.7% աճ, ինչը բավականին գոհացուցիչ է համեմատվող երկրների շարքում, սակայն դեռևս ցածր է ինչպես բարձր զարգացվածություն ունեցող, այնպես էլ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշներից: Ակնառու են նաև Թուրքիայում և Բելառուսում տեղի ունեցած փոփոխությունները. այս երկրներում մեկ շնչի հաշվով ՀԱԵ-ն աճել է համապատասխանաբար՝ 121.4 և 108.6 տոկոսով: Ղրղզստանն աշխարհի այն փոքրաթիվ երկրներից մեկն է, որտեղ այս ցուցանիշն անկում է ապրում (-5.4%):

[17] Տե՛ս https://hdr.undp.org/en/data

Աղյուսակ 3

ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների 2019 թ. ՄԶԻ-ն և բաղկացուցիչ ցուցանիշները (փոփոխությունը՝ 1990-2019 թթ.)

	Դիրքը / Rank	ՄԶԻ / HDI	HDI աճը, %	Կյանքի սպասվող տևողությունը / LE	LE աճը, տարի	Առողջության ինդեքս	Առողջության ինդեքսի աճը, %	Կրթության սպասվող տևողությունը / EYS	EYS աճը, տարի	Կրթության միջին տևողությունը / MYS	MYS աճը, տարի	Կրթության ինդեքս	Կրթության ինդեքսի աճը, %	ՀԱԵ-ն մեկ շնչի հաշվով / GNI per capita***	GNI per capita աճը, %	Եկամտի ինդեքս	Եկամտի ինդեքսի աճը, %
Հայաստան	**81**	**0.776**	**18.7**	**75.1**	**7.2**	**0.848**	**15.1**	**13.1**	**2.3**	**11.3**	**1.2**	**0.740**	**16.2**	**13 894**	**167.7**	**0.745**	**24.8**
ԵԱՏՄ երկրներ																	
Ռուսաստան	52	0.824	12.1	72.6	4.6	0.809	9.5	15	2.2	12.2	3.0	0.823	24.1	26 157	21.6	0.841	3.7
Բելառուս	53	0.823	24.7*	74.8	4.2	0.843	8.2	15.4	2.5	12.3	3.8*	0.838	33.0*	18 546	108.6	0.789	16.4
Ղազախստան	51	0.825	19.6	73.6	6.8	0.825	14.6	15.6	3.2	11.9	3.8	0.830	35.4	22 857	66.3	0.821	10.3
Ղրղզստան	120	0.697	8.9	71.5	5.2	0.792	11.1	13	1	11.1	2.5	0.730	17.9	4 864	-5.4	0.587	-1.3
Հարևան երկրներ																	
Թուրքիա	54	0.820	40.7	77.7	13.4	0.888	30.4	16.6	7.7	8.1	3.6	0.731	83.2	27 701	121.4	0.850	16.4
Վրաստան	61	0.812	17.7**	73.8	3.4	0.827	6.7	15.3	2.9	13.1	1.4**	0.862	20.2**	14 429	35.3	0.751	6.5
Իրան	70	0.783	38.6	76.7	12.9	0.872	29.4	14.8	5.6	10.3	6.1	0.756	90.4	12 447	43.5	0.729	8.2
Ադրբեջան	88	0.756	25.2*	73	8.2	0.816	18.3	12.9	2.2	10.6	0.4*	0.711	15.0*	13 784	79.4	0.744	13.4

* հաշվարկված են 1995 թ. նկատմամբ

** հաշվարկված են 2000 թ. նկատմամբ

*** տվյալները ներկայացված են 2017 թ. գնողունակության համարժեքությամբ (դոլար)

Աղբյուրը՝ UNDP HDR Data Center[17]*:*

Աղյուսակ 4

ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների 2019 թ. անհավասարությամբ ճշգրտված ՄԶԻ-ն և բաղկացուցիչ ցուցանիշները (փոփոխությունը 2010–2019 թթ.)

	Անհավասարությամբ ճշգրտված ՄԶԻ / IHDI	IHDI աճը, %	Անհավասարությամբ ճշգրտված առողջության ինդեքս / IHI	IHI աճը, %	Անհավասարությամբ ճշգրտված կրթության ինդեքս / IEI	IEI աճը, %	Անհավասարությամբ ճշգրտված եկամտի ինդեքս / II	II աճը, %	GNI per capita աճը, %	Կորուստը	Մարդկային անհավասարության գործակիցը
Հայաստան	**0.699**	**5.1**	**0.774**	**11.4**	**0.718**	**4.7**	**0.616**	**-0.2**	**42.5**	**9.9**	**9.7**
ԵԱՏՄ երկրներ											
Ռուսաստան	0.740	7.1	0.751	13.3	0.789	15.0	0.683	-5.8	12.5	10.2	10.0
Բելառուս	0.771	6.9	0.806	13.0	0.807	5.9	0.704	2.0	9.2	6.3	6.3
Ղազախստան	0.766	15.9	0.761	26.0	0.804	8.6	0.736	13.9	27.2	7.2	7.1
Ղրղզստան	0.630	12.1	0.702	19.2	0.706	14.1	0.506	4.1	25.0	9.6	9.5
Հարևան երկրներ											
Թուրքիա	0.683	21.1	0.808	15.4	0.611	39.8	0.645	9.7	39.4	16.7	16.5
Վրաստան	0.716	14.9	0.762	18.9	0.826	11.8	0.582	13.9	50.6	11.8	11.5
Իրան	0.693	35.4*	0.792	15.5	0.719	55.3*	0.585	49.6*	-9.9	11.5	11.3
Ադրբեջան	0.684	9.3	0.702	17.6	0.673	16.0	0.678	-4.2	2.0	9.5	9.4

* հաշվարկված են 2013 թ. նկատմամբ

Աղբյուրը՝ UNDP HDR Data Center17:

Հայաստանում մարդկային զարգացման ինդեքսի աճը պայմանավորված է առավելապես եկամուտների աճով. առողջության ինդեքսի աճը կազմել է 15.1%, կրթության ինդեքսի աճը՝ 16.2%, իսկ եկամուտներինը՝ 24.8%: Ադրբեջանի դեպքում ամենաշատը աճել է առողջության ինդեքսը, սակայն առավելությունն այնքան էլ մեծ չէ մյուս ինդեքսների նկատմամբ, իսկ մնացած երկրներում մարդկային զարգացման ինդեքսի աճի հիմնական շարժիչ ուժը կրթության ինդեքսն է (հատկապես ակնառու են Իրանում և Թուրքիայում տեղի ունեցած փոփոխությունները):

Հայաստանում 2019 թ. HDI արժեքի կորուստը (անհավասարությամբ պայմանավորված) կազմել է 9.9%, ինչի արդյունքում անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսը կազմել է 0.699 միավոր, որը գերազանցում է ինչպես բարձր զարգացվածություն ունեցող, այնպես էլ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին արժեքները (համապատասխանաբար՝ 0.618 և 0.697): ԵԱՏՄ երկրների շարքում անհավասարության պատճառով կորուստը Ռուսաստանում ամենամեծն է (10.2%), իսկ Բելառուսում՝ ամենափոքրը (6.3%): Բնակչության շրջանում անհավասարությունը շատ մեծ է Թուրքիայում, որտեղ կորուստը կազմել է 16.7%: Ուսումնասիրվող բոլոր երկրներում անհավասարությամբ ճշգրտված առողջության և կրթության ինդեքսները 2010–2019 թթ. աճել են, ինչը նշանակում է, որ նշված հարթություններում անհավասարությունը կրճատվել է բոլոր երկրներում, իսկ անհավասարությամբ ճշգրտված եկամտի ինդեքսը Հայաստանում, Ռուսաստանում և Ադրբեջանում նվազել է: Նկատենք, որ նշված երկրներում 2010–2019 թթ. մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ն աճել է համապատասխանաբար՝ 42.5%-ով, 12.5%-ով և 2.0%-ով, ինչը նշանակում է, որ տվյալ երկրներում, չնայած եկամուտների արագ աճին, անհավասարությունը շարունակաբար խորանում է: Այսինքն՝ տնտեսական աճի արդյունքում միջին եկամտի աճը տեղի է ունենում առավելապես բարձր եկամտային խմբերի աճի հաշվին: Այս առումով հատկանշական են Իրանում տեղի ունեցած փոփոխությունները. 2010-2019 թթ. մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ն նվազել է 9.9%-ով, ինչը, սակայն, ուղեկցվել է այդ երկրում անհավասարության կտրուկ նվազմամբ (անհավասարությամբ ճշգրտված եկամտի ինդեքսը աճել է շուրջ 50%-ով): Մնացած բոլոր երկրներում մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ի աճի տեմպերը առաջանցիկ են եկամուտների բաշխման անհավասարության նվազման տեմպերից:

Ուսումնասիրվող երկրներում Անհավասարությամբ ճշգրտված ՄԶԻ աճը հիմնականում պայմանավորված է առողջապահության ոլորտում անհավասարության կրճատմամբ: Բացառություն են միայն Թուրքիան, որտեղ անհավասարությունը արագ տեմպերով նվազում է կրթության ոլորտում, և Իրանը, որտեղ անհավասարությունը ակնառու նվազում է և՛ կրթության, և՛ եկամուտների հարթություններում:

Հայաստանում 2019 թ. գենդերային անհավասարության ինդեքսը կազմել է 0.245 միավոր, որը 54-րդ լավագույն ցուցանիշն է 162 երկրների շարքում, իսկ հարևան երկրների շրջանում Հայաստանն ունի լավագույն գնահատականը: Բարձր զարգացվածություն ունեցող, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում գենդերային անհավասարությունը միջինում ավելի մեծ է (համապատասխանաբար՝ 0.340 և 0.256): Այս ցուցանիշը

բավականին փոքր է Բելառուսում և Ղազախստանում (համապատասխանաբար՝ 0.118 և 0.190), և, իհարկե, ամենամեծն է Իրանում (0.459): 2017 թ. տվյալներով[18] մայրական մահացության գործակիցը Հայաստանում 26 է (100 000 կենդանի ծնվածի հաշվով): Այս ցուցանիշով շատ լավ գնահատական ունի Բելառուսը (2), իսկ Ղրղզստանում ցուցանիշը շատ բարձր է (60): Դեռահասների ծնելիության գործակիցը Հայաստանում 21.5 է (15–19 տարեկան 1 000 կնոջ հաշվով): Այս ցուցանիշով առաջատարը դարձյալ Բելառուսն է (14.5), իսկ Ադրբեջանում ցուցանիշը շատ բարձր է (55.8): Հայաստանում 25 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում առնվազն միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռները գրեթե նույնն են: Այս առումով հատկանշական է Թուրքիան, որտեղ տղամարդկանց տեսակարար կշիռը 72.2% է, իսկ կանանցն ընդամենը 50.2% (այստեղ 25 տարեկանից բարձր իգական սեռի բնակչության գրեթե կեսը չունի միջնակարգ կրթություն): Հայաստանում 15 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց 47.1%-ը, իսկ տղամարդկանց 65.9%-ը ներգրավված են աշխատուժի ցուցանիշում: Կանայք աշխատուժին մասնակցության բարձր աստիճան ունեն Ադրբեջանում և Ղազախստանում (համապատասխանաբար՝ 63.4 և 62.7 տոկոս), իսկ տղամարդիկ՝ Վրաստանում (80.8%):

2010-2019 թթ. գենդերային անհավասարության ինդեքսը Հայաստանում նվազել է 28.4%-ով, ինչը բավականին դրական ցուցանիշ է համեմատվող երկրների շրջանում: Գենդերային անհավասարությունը արագ տեմպերով նվազում է նաև Ղազախստանում և Թուրքիայում (համապատասխանաբար՝ 30.9 և 28.3 տոկոս): Ադրբեջանում և Ղրղզստանում հակառակ պատկերն է. այս երկրներում գենդերային անհավասարությունը վերջին տասնամյակում աճել է համապատասխանաբար՝ 3.2 և 2.2 տոկոսով:

Հայաստանում 2019 թ. գենդերային զարգացման ինդեքսը կազմել է 0.982 միավոր. գենդերային հավասարությունից բացարձակ շեղումը 1.8% է, ինչը բավականին լավ ցուցանիշ է, քանի որ բարձր զարգացվածությամբ երկրներում միջին շեղումը 3.9% է, իսկ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում՝ 4.7%: Հայաստանում, ինչպես և ուսումնասիրվող գրեթե բոլոր երկրներում տղամարդիկ ավելի զարգացած են, քան կանայք: Բացառություն են միայն Ռուսաստանն ու Բելառուսը, որտեղ կանայք մի փոքր գերազանցում են տղամարդկանց (0.7%): ԵԱՏՄ բոլոր երկրները, բացի Ղրղզստանից, ընդգրկված են գենդերային դասակարգման առաջին, Ղրղզստանը (4.3%)՝ երկրորդ, Ադրբեջանը (5.7%)՝ երրորդ, Թուրքիան (7.6%)՝ չորրորդ, Իրանը (13.4%)՝ հինգերորդ խմբերում: 2010-2019 թթ. տվյալներով Հայաստանում, Թուրքիայում և Վրաստանում կանանց ՄԶԻ աճը առաջանցիկ է տղամարդկանց ՄԶԻ աճից, Իրանում աճը գրեթե նույնական է, իսկ մնացած երկրներում հակառակ պատկերն է: Հատկանշական է, որ Թուրքիայում կանանց ՄԶԻ արժեքը այս ընթացքում ամենաշատն է աճել (10.9%), սակայն այդ երկրում դեռևս շատ մեծ է գենդերային հավասարությունից շեղումը:

[18] Ավելի թարմ ցուցանիշներ ՀԲ և ՄԶԾ տվյալների կենտրոնում առկա չեն: ՀՀ ՎԿ և մյուս երկրների ազգային վիճակագրական գրասենյակների կողմից այս ցուցանիշը հաշվարկվում է, սակայն կան մեթոդաբանական խիստ տարբերություններ ինչպես ՀԲ-ի, այնպես էլ մեկը մյուսի հետ համեմատած, ինչը անհնար է դարձնում տվյալների համադրումը:

Աղյուսակ 5

ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների 2019 թ. գենդերային անհավասարության ինդեքսը և բաղկացուցիչ ցուցանիշները

	Դիրքը / Rank	Գենդերային անհավասարության ինդեքս / GII	GII աճը 2010-2019	Մայրական մահացության գործակից / MMR*	Դեռահասների ծնելիության գործակից / ABR**	Պառլամենտում կանանց մասնաբաժինը / PR	Առնվազն միջնակարգ կրթություն ունեցող բնակչություն / SE		Աշխատուժին մասնակցության աստիճան / LFPR***	
							Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ
Չափումը		-	%	մահ	ծնունդ	%	25 և բարձր տարիքի բնակչության մեջ (%)		15 և բարձր տարիքի բնակչության մեջ (%)	
Հայաստան	**54**	**0.245**	**-28.4**	**26**	**21.5**	**23.5**	**97.3**	**97.2**	**47.1**	**65.9**
ԵԱՏՄ երկրներ										
Ռուսաստան	50	0.225	-26.2	17	20.7	16.5	96.3	95.7	54.8	70.2
Բելառուս	31	0.118	-21.3	2	14.5	34.9	87.2	92.5	57.7	71.8
Ղազախստան	44	0.190	-30.9	10	29.8	22.1	99.3	99.6	62.7	75.5
Ղրղզստան	82	0.369	2.2	60	32.8	19.2	99.1	98.3	44.8	75.7
Հարևան երկրներ										
Թուրքիա	68	0.306	-28.3	17	26.6	17.4	50.2	72.2	34	72.6
Վրաստան	76	0.331	-18.5	25	46.4	14.8	97.2	98.6	57.4	80.8
Իրան	113	0.459	-11.6	16	40.6	5.9	67.4	72.8	17.5	71.5
Ադրբեջան	73	0.323	3.2	26	55.8	16.8	93.9	97.5	63.4	69.7

* 100 000 կենդանի ծնվածի հաշվով

** 15-19 տարեկան 1 000 կնոջ հաշվով, 2015-2020 թթ. միջին տարեկան գնահատականներ

*** ԱՄԿ գնահատականներ

Աղբյուրը՝ UNDP HDR Data Center17:

Աղյուսակ 6

ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների 2019 թ. գենդերային զարգացման ինդեքսը և բաղկացուցիչ ցուցանիշները (փոփոխությունը 2010–2019 թթ.)

	Խումբը	Գենդերային զարգացման ինդեքս / GDI	Բացարձակ շեղումը գենդերային հավասարությունից, %	ՄԶԻ կանայք HDI_f		ՄԶԻ տղամարդիկ HDI_m		Կյանքի սպասվող տևողություն		Կրթության սպասվող տևողություն		Կրթության միջին տևողություն		Մեկ շնչի հաշվով գնահատված ՀԱԵ*	
				Արժեքը	Աճը, %	Արժեքը	Աճը, %	Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ	Կանայք / $GNIpc_f$	Տղամարդիկ / $GNIpc_m$
Հայաստան	**1**	**0.982**	**1.8**	**0.766**	**4.9**	**0.780**	**3.0**	**78.5**	**71.3**	**13.6**	**12.6**	**11.3**	**11.3**	**9 737**	**18 574**
ԵԱՏՄ երկրներ															
Ռուսաստան	1	1.007	0.7	0.823	4.2	0.817	6.1	77.8	67.1	15.3	14.8	11.9	12.1	19 694	33 640
Բելառուս	1	1.007	0.7	0.824	2.5	0.819	4.5	79.6	69.7	15.7	15.2	12.2	12.4	14 911	22 721
Ղազախստան	1	0.980	2	0.807	5.4	0.823	8.3	77.7	69.2	15.8	15.1	10.9	11.9	16 791	29 296
Ղրղզստան	2	0.957	4.3	0.677	4.6	0.707	5.7	75.6	67.4	13.2	12.7	11.2	11.0	2 971	6 798
Հարևան երկրներ															
Թուրքիա	4	0.924	7.6	0.784	10.9	0.848	8.9	80.6	74.7	16.0	17.1	7.3	9.0	17 854	37 807
Վրաստան	1	0.980	2	0.800	9.0	0.817	7.6	78.1	69.3	15.5	15.0	13.2	13.1	9 475	19 864
Իրան	5	0.866	13.4	0.709	5.8	0.819	5.7	77.9	75.6	14.6	15.0	10.3	10.4	4 084	20 637
Ադրբեջան	3	0.943	5.7	0.730	3.5	0.774	4.0	75.5	70.5	13.0	12.8	10.2	10.9	8 919	18 664

* տվյալները ներկայացված են 2017 թ. գնողունակության համարժեքությամբ (դոլար)

Աղբյուրը՝ UNDP HDR Data Center[17]*:*

Հայաստանում կանայք միջինում 7.2 տարի ավելի երկար են ապրում, քան տղամարդիկ: Այս տարբերությունն ամենամեծը Ռուսաստանում է, որտեղ կյանքի սպասվող տևողությամբ կանայք գերազանցում են տղամարդկանց 10.7 տարով, իսկ Իրանում այս տարբերությունն ընդամենը 2.3 տարի է: Հայաստանի 5-24 տարեկան կանանց շրջանում կրթության սպասվող տևողությունը 1 տարով ավելի է տղամարդկանցից, ովքեր այս ցուցանիշով գերազանցում են կանանց միայն Թուրքիայում և Իրանում (համապատասխանաբար՝ 1.1 և 0.4 տարով): Այլ պատկեր է 25 և բարձր տարիքի բնակչության դեպքում, որտեղ ուսումնասիրվող գրեթե բոլոր երկրներում տղամարդկանց կրթության միջին տևողությունը, աննշան, բայց գերազանցում է կանանց ցուցանիշը: Մտահոգիչ է կանանց և տղամարդկանց եկամուտների տարբերությունը, որը շատ մեծ է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ուսումնասիրվող երկրներում: Հայաստանում տղամարդկանց եկամուտները գրեթե 2 անգամ (91%) ավելի են կանանց եկամուտներից: Այս ցուցանիշը մոտ է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշին (92.4%), սակայն դեռևս շատ հեռու է բարձր զարգացվածությամբ երկրների միջինից (70.1%): ԵԱՏՄ մյուս երկրներում, բացի Ղրղզստանից, այս տարբերությունն ավելի փոքր է: Բելառուսում դա կազմում է ընդամենը 52%, ինչը կարելի է համարել բավականին լավ ցուցանիշ, քանի որ շատ բարձր զարգացվածությամբ երկրներում միջինը 65.5% է: Հարևան բոլոր երկրներում և Ղրղզստանում այս տարբերությունը կրկնակիից ավելի է, իսկ Իրանում տղամարդիկ կանանցից ավելի քան 4 անգամ շատ են վաստակում:

Տղամարդկանց զարգացման ավելի բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է եկամուտների առավելությամբ: Իրանում և Ադրբեջանում տղամարդիկ առավելություն ունեն բոլոր երեք հարթություններում (Ադրբեջանում առողջության ինդեքսները հավասար են): Մնացած բոլոր երկրներում կանանց առողջության և կրթության (բացառությամբ Ղազախստանի և Թուրքիայի) ինդեքսներն ավելի բարձր են: Ինչպես արդեն նշվել է, Ռուսաստանում և Բելառուսում կանայք ավելի զարգացած են, ինչը հիմնականում պայմանավորված է առողջության հարթությունում նրանց ունեցած առավելությամբ:

Հայաստանում կանանց ՄԶԻ աճը հիմնականում պայմանավորված է նրանց եկամուտների աճով. եկամուտների ինդեքսը վերջին տասնամյակում աճել է 9.9%-ով: ԵԱՏՄ մյուս երկրներում կանանց ՄԶԻ աճը հիմնականում տեղի է ունենում առողջության, իսկ հարևան երկրներում՝ կրթության ինդեքսների աճի հաշվին (Վրաստանում մեծ է նաև եկամուտների ինդեքսի աճը): Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց դեպքում, Հայաստանում ՄԶԻ աճը հիմնականում պայմանավորված է եկամուտների աճով (ինդեքսի աճը՝ 6.5%), որը նաև Ղազախստանի համար է ամենամեծը (7.0%): Մյուս երկրներում տղամարդկանց ՄԶԻ աճը առավելապես տեղի է ունենում նույն հարթությունների հաշվին, ինչ՝ կանանց դեպքում:

Աղյուսակ 7

ՀՀ, ԵԱՏՄ և հարևան երկրների 2019 թ. ՄԶԻ չափող ինդեքսները՝ հաշվարկված գենդերային երկու խմբերի համար (փոփոխությունը 2010–2019 թթ.)

	Առողջության ինդեքս				Կրթության ինդեքս				Եկամտի ինդեքս			
	Կանայք		Տղամարդիկ		Կանայք		Տղամարդիկ		Կանայք		Տղամարդիկ	
	Արժեքը	Աճը, %	Արժեքը	Աճը, %	Արժեքը	Աճը, %	Արժեքը	Աճը, %	Արժեքը	Աճը, %	Արժեքը	Աճը, %
Հայաստան	**0.862**	**3.9**	**0.828**	**2.5**	**0.754**	**0.7**	**0.727**	**0.2**	**0.692**	**9.9**	**0.789**	**6.5**
ԵԱՏՄ երկրներ												
Ռուսաստան	0.851	5.7	0.763	9.5	0.822	4.6	0.814	6.9	0.798	2.2	0.879	2.1
Բելառուս	0.878	5.5	0.803	9.7	0.843	-0.1	0.836	2.2	0.756	1.8	0.820	1.6
Ղազախստան	0.849	10.0	0.795	15.7	0.802	2.2	0.816	5.3	0.774	4.5	0.858	4.6
Ղրղզստան	0.817	5.1	0.768	5.3	0.740	4.8	0.719	3.9	0.512	3.5	0.637	7.0
Հարևան երկրներ												
Թուրքիա	0.894	5.1	0.880	6.5	0.688	18.1	0.775	15.6	0.783	9.4	0.897	4.9
Վրաստան	0.855	3.9	0.797	4.9	0.871	12.2	0.853	9.9	0.687	11.5	0.799	7.7
Իրան	0.852	4.7	0.894	5.6	0.749	14.4	0.763	14.4	0.560	-0.8	0.805	-2.2
Ադրբեջան	0.815	2.7	0.815	5.4	0.701	8.6	0.719	5.8	0.678	-0.6	0.790	0.8

Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները UNDP HDR Data Center[17] տվյալների հիման վրա:



Գծապատկեր 2. ***ՀՀ կանանց և տղամարդկանց մեկ շնչի հաշվով գնահատված եկամուտների* աճի դինամիկան (աճի ինդեքս. 2010=100%)***

* բոլոր տվյալները հաշվարկված են 2017 թ. գնողունակության համարժեքությամբ (դոլար)
Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները UNDP HDR Data Center[17] *տվյալների հիման վրա:*

Գծապատկեր 2-ում ներկայացված են երկու գենդերային խմբերի համար գնահատված՝ մեկ շնչի հաշվով ՀԱԵ-ի աճի միտումները: Ինչպես երևում է գծապատկերից, կանանց եկամուտների աճն առաջանցիկ է տղամարդկանցինից, սակայն դեռևս անհավասարությունն այստեղ շատ մեծ է, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, 2019 թ. տղամարդկանց եկամուտները գրեթե 2 անգամ շատ են կանանց եկամուտներից: Եթե հաջորդ տասնամյակի ընթացքում աճի համամասնությունն ու տեմպերը պահպանվեն, ապա այս ցուցանիշն ընդհուպ կմոտենա բարձր զարգացվածությամբ երկրների 2019 թ. միջին արժեքին:

Եզրակացություններ

- Հայաստանը 2019 թ. ՄԶԻ 0.776 միավորով զբաղեցրել է 81-րդ հորիզոնականը 189 երկրների շարքում: Ինդեքսի աճը 1990 թ. նկատմամբ կազմել է 18.7%: Հայաստանը դասված է մարդկային բարձր զարգացվածություն ունեցող երկրների շարքին և այդ խմբում ունի միջինից բարձր ցուցանիշ: ՀՀ ՄԶԻ աճը առավելապես պայմանավորված է եկամուտների աճով: Ադրբեջանի դեպքում ամենաշատն աճել է առողջության ինդեքսը, իսկ մնացած երկրներում հիմնական շարժիչ ուժը կրթության ինդեքսն է: Իհարկե, եկամուտների ավելացումը շատ կարևոր է, սակայն, ինչպես ցույց են տալիս վերլուծության արդյունքները, Հայաստանը առողջության և հատկապես կրթության հարթություններում զիջում է, ուստի պետք է կատարվեն լուրջ բարեփոխումներ, որոնք հիմնված կլինեն միջազգային հաջող փորձի վրա, և հաջորդ տասնամյակների ընթացքում էականորեն կբարձրացնեն համապատասխան ցուցանիշները՝ ապահովելով ՄԶԻ էական և իրական աճ:
- Հայաստանում 2019 թ. ՄԶԻ արժեքի կորուստը (անհավասարությամբ պայմանավորված) 9.9% է, ինչի արդյունքում անհավասարությամբ ճշգրտված ՄԶԻ-ն կազմել է 0.699 միավոր, որը գերազանցում

է ինչպես բարձր զարգացվածություն ունեցող, այնպես էլ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշները: Անհավասարության պատճառով կորուստը Թուրքիայում ամենամեծն է, իսկ Բելառուսում՝ ամենափոքրը: Ուսումնասիրվող բոլոր երկրներում անհավասարությունն առողջության և կրթության հարթություններում ունի նվազման միտում: Անհավասարությամբ ճշգրտված եկամտի ինդեքսը Հայաստանում, Ռուսաստանում և Ադրբեջանում նվազում է, ինչը նշանակում է, որ, չնայած եկամուտների արագ աճին, այս երկրներում անհավասարությունը մեծանում է: Այլ կերպ ասած՝ միջին եկամտի աճը տեղի է ունենում առավելապես բարձր եկամտային խմբերի աճի հաշվին: Իրանում նախորդ տասնամյակի ընթացքում ՀԱԵ-ն նվազել է շուրջ 10%-ով, ինչը, սակայն, ուղեկցվել է անհավասարության կտրուկ նվազմամբ: Ուսումնասիրվող երկրներում Անհավասարությամբ ճշգրտված ՄԶԻ աճը հիմնականում պայմանավորված է առողջապահության ոլորտում անհավասարության կրճատմամբ:

- Հայաստանում 2019 թ. գենդերային անհավասարության ինդեքսը կազմել է 0.245 միավոր, որը 54-րդն է 162 երկրների շարքում, իսկ հարևան երկրների շրջանում Հայաստանն ունի լավագույն գնահատականը: Բարձր զարգացվածություն ունեցող, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում գենդերային անհավասարությունը միջինում ավելի մեծ է: Այս ցուցանիշը բավականին փոքր է Բելառուսում և Ղազախստանում, և, իհարկե, ամենամեծն է Իրանում: Վերջին տասնամյակում գենդերային անհավասարությունը Հայաստանում և Թուրքիայում նվազել է ավելի քան 28, իսկ Ղազախստանում՝ մոտ 31 տոկոսով: Ադրբեջանում և Ղրղզստանում այս ցուցանիշն ունի աճի միտումներ:

Հայաստանում 2019 թ. գենդերային զարգացման ինդեքսը կազմել է 0.982 միավոր. գենդերային հավասարությունից բացարձակ շեղումը 1.8% է: Բարձր զարգացվածություն ունեցող, ինչպես նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում շեղումն ավելի մեծ է: Բացառությամբ Ռուսաստանի և Բելառուսի՝ բոլոր երկրներում տղամարդիկ ավելի զարգացած են, քան կանայք: Հայաստանում, Թուրքիայում և Վրաստանում կանանց ՄԶԻ աճը առաջանցիկ է տղամարդկանց ՄԶԻ աճից, Իրանում աճը գրեթե նույնական է, իսկ մնացած երկրներում հակառակ պատկերն է: Մտահոգիչ է կանանց և տղամարդկանց եկամուտների տարբերությունը, որը շատ մեծ է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ուսումնասիրվող երկրներում: Թեև Հայաստանում կանանց եկամուտների աճն առաջանցիկ է տղամարդկանցից, վերջիններիս եկամուտները գրեթե 2 անգամ ավելի են կանանց եկամուտներից: Այս ցուցանիշը մոտ է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջինին, սակայն դեռևս շատ հեռու է բարձր զարգացվածությամբ երկրների միջինից: Հարևան բոլոր երկրներում և Ղրղզստանում տարբերությունը կրկնակիից, իսկ Իրանում քառակիից ավելի է: Բելառուսում այս ցուցանիշը շատ ցածր է՝ ընդամենը 52%: Տղամարդկանց զարգացման ավելի բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է եկամուտների առավելությամբ: Ռուսաստանում և Բելառուսում կանայք ավելի զարգացած են, ինչը հիմնակա-

նում պայմանավորված է առողջության հարթությունում նրանց ունեցած առավելությամբ: Հայաստանում կանանց ՄԶԻ աճը հիմնականում պայմանավորված է նրանց եկամուտների աճով, ԵԱՏՄ երկրներում շարժիչ ուժը առողջությունն է, իսկ հարևան երկրներում՝ կրթությունը: Հայաստանում և Ղազախստանում տղամարդկանց ՄԶԻ աճը հիմնականում պայմանավորված է եկամուտների աճով, իսկ մյուս երկրներում պատկերը նույնն է, ինչ՝ կանանց դեպքում:

Օգտագործված գրականություն

1. Господарик Е.Г., Иришев Б., Ковалев М.М., Гибридная производственная модель прогнозирования экономического роста ЕАЭС, «Новая экономика», 1(65), 2015.
2. Журавлева Г.П., Манохина Н.В., Самохина Е.А., Международная рейтинговая оценка развития стран-членов ЕАЭС, Вестник Челябинского государственного университета 10(406), 2017.
3. Толысбаев Б.С., Утеубаев Т.Б., Курманов Н.А., Человеческий потенциал Казахстана и в странах ЕАЭС, Хабаршысы 2(82), 2016.
4. HDR Technical Notes 2020, https://hdr.undp.org/en/content/hdr-technical-notes
5. Mahbub ul Haq, Reflections on Human Development, Oxford University Press, New York, 1995.
6. OECD, How's Life? 2020: Measuring Well-being, OECD Publishing, Paris, 2020, https://doi.org/10.1787/9870c393-en
7. OECD, How's Life?: Measuring Well-being, OECD Publishing, Paris, 2011, https://doi.org/10.1787/9789264121164-en
8. Rao V.V. Bhanoji, Human Development Report 1990: Review and Assessment, World Development, vol. 19, No 10, pp. 1451-1460, GB 1991.
9. Sen A., The Standard of Living, Cambridge University Press, UK 1987.
10. Srinivasan T., Human Development: A New Paradigm or Reinvention of the Wheel?, American Economic Review, vol. 84, issue 2, 1994.
11. Stanton E.A., The human development index: A history, PERI Working Papers, 2007.
12. UNDP, 2018 Statistical Update: Human Development indices and Indicators, New York, 2018, https://hdr.undp.org/en/content/human-development-indices-indicators-2018-statistical-update
13. UNDP, HDR 2020, The next frontier: Human development and the Anthropocene, 2020.
14. https://hdr.undp.org/en/data
15. https://www.oecd.org/

РОМИК КАЗАРЯН
Аспирант кафедры экономико-математических методов АГЭУ

Анализ развития населения, жизненного уровня и неравенства РА, ЕАЭС и соседних стран.– Оценка уровня жизни населения является одним из важных инструментов в социально-экономической политике любой страны, для которой может быть использовано большое количество показателей, которые можно разделить на две группы: качественные и количественные. С этой точки зрения создание и развитие таких методов, которые были бы более описательными, надежными, включающими социально и экономически значимые показатели жизнедеятельности и практически применимыми (простота расчета, доступность и достоверность данных, возможность проведения сравнительного анализа между популяциями разных стран и регионов) очень важно. В этом контексте Программа Развития Организации Объединенных Наций (ПРООН) предлагает различные подходы к оценке уровня жизни населения, которые, развиваясь во времени и включая важные социальные и экономические аспекты жизни людей, широко используются во всем мире государственными органами (национальная статистика, развитие социально-экономической политики и т.д.), а также многими учеными для проведения исследований по теме.

Статья направлена на сравнительный анализ и оценку показателей развития, неравенства и уровня жизни РА, ЕАЭС и соседних стран, и для этого в качестве инструмента была выбрана группа индексов, предложенная ПРООН.

В результате анализа было выявлено, что рост ИЧР Армении, в отличие от других исследуемых стран, обусловлен в основном ростом доходов населения. Рост доходов в Армении, России и Азербайджане сопровождается углублением неравенства. В Армении значение ИЧР у мужчин выше, что в основном связано с почти двукратным преимуществом в доходах.

Ключевые слова: *уровень жизни, неравенство, здоровье, образование, доходы, ИЧР*
JEL: I00, N30
DOI: 10.52174/1829-0280_2022.3-131

ROMIK GHAZARYAN
PhD student at the chair of Economic-Mathematical Methods at ASUE

Analysis of the Population Development, Living Standards and Inequality of RA, EAEU and Neighboring Countries.– Evaluating the living standards of the population is one of the important tools of socio-economic policy of any country, for

which a large number of indicators can be used, that can be divided into two groups: qualitative and quantitative indicators. In this regard, it is very important to create and develop more descriptive, reliable, practical methods (simplicity of calculation, data accessibility and reliability, ability to make comparative analyzes between populations of different countries or regions) that include significant social and economic indicators of life. In this context, the United Nations Development Program (UNDP) offers several approaches to evaluating the living standards of the population, which, evolving over time, include important social and economic aspects of human life and are widely used all over the world, both at the state level (national statistics, socio-economic policy development, etc.) and by many scholars and researchers conducting research on the topic.

The aim of the paper is to perform comparative analysis and evaluation of indicators of development, inequality and standard of living of RA, EAEU and neighboring countries, for which the set of indices proposed by the UNDP was selected as a tool.

As a result of the analysis, it was revealed that the growth of HDI of the RA, in contrast to the other countries under study, is caused mainly by the growth of incomes. Incomes are rising in Armenia, Russia, and Azerbaijan, but the level of inequality is deepening. The HDI value of men in Armenia is higher, which is mainly due to the almost double advantage of incomes.

Keywords: *living standards, inequality, health, education, incomes, HDR*
JEL: I00, N30
DOI: 10.52174/1829-0280_2022.3-131